



## 172. ԸՆԿԱՏԵՆ ԷՇԸ

Իլալ ա, իլալ շի, մին ախեատ կնեղյ ա իլալ, էտ կնգանը վեշ  
մին ապրուստ շի իլալ, էս ախեատ կնգանը մին էծ ա իլալ, Սաղ  
տոն-տոնամալ էտ էծն ա իլալ, Մին դինում պատահում ա մին մար-  
թու էս մարթը ժանոթ ա ինում, ինքյն էլ բազար քյինիլիս, էտ  
մարթին էս կնեղյը զալանք ա անում, ասում.

—Վեր քյինում ես բազար, տար էծս ժախե, ինձ հետե մին  
հայավ էլ պեր, մին խըլեղ էլ, տասսը մանեթ փուլ էլ, էծըս էլ ետ  
պեր, ախապեր:

Էտ մարթը էծը յոր ա օնում, քյինում բազար, Քյինում տեղը  
հղցեն պշտահում ա մին խաղու ծխողու էտ խաղու ժախողն ասում  
ա.—Ախապեր, էտ էծը ժախու յա՝:

Ասում ա.—Հա՛:

Ասում ա.—Հի՞նչ տամ:

Ասում ա.—Մին փոր խաղու տո, քշտանամ, էծը քեղ տամ:

Ասում ա.—Հա՛, լավ, կողքին նստե, հինչքան օզում ըս, կերտ  
էս խաղու ժախողը տեսնում ա, վեր էծատարը հինչքան  
օտում ա, կշտանում շի, ասում ա.

—Ախապեր, եր կաց քյինի, կերած խաղում էլ քեղ, էծն էլ,  
մինակ եր կաց քյինի:

Էծ ժախողը էծը յոր ա օնում, հայդա, քյինում: Քյինում ա մին

Հյաթում վենեց կենում, տնատերը մին կնեց ա ինում, տուս ա կլամ: Մթեն ա ինում, էծ ծախողը էս կնդանն ասում ա.

—Ա՛ քուր, դարիր մարթ ըմ, մթեն ա, էս բռեցյուն ինձ դոնազ պահ:

Էտ կնեղյը ասում ա.—Հիլաթաս տուս եկ, քինի, կորե, տանս մարթ չկա, մարթը քիցալ ա ճեղաց, ու վա՞ գյուղում հիբ կկլա:

Էծ ծախողը զաշանք ա անում.—Ա՛ քուր, ես քին մատաղ, մթեն ա, թող էս հյաթեն մին բուրցումը կենամ:

Էծ ծախողը կլիսու վա ըղնում, վեր էս կնեղյը սիրեկան օնե, ինքին էլ նրա հետեւ թխվածք ա թխում: Էծը յոր ա օնում, մթամ թա հյաթան քյինում ա, պայց թաքում տոն ա մտնում, մի քյին-չում կյողը կենում: Էս կնեղյը եշում ա, տեսնում էծն ու իժատերը կան վուշ, ասում ա.—Թաղիմ կլլթխըտ, խրեց մեաց ամեն հինչ փողմիշ անեւ:

Մերը նկատեն տիրած, նախասը փորը քցած, ըսպասում ա սիրեկաննեն: Մին էլ, ընը, սիրեկանը կլամ ա: Կնեղյն ու սիրեկանը մտնում ըն տոն, սեղան-սուսիրա քցում, թխվածք-մխվածք տնում, վեր օտին, կնդանը մարթը տուանը շլուշ ա ասում: Կնեղյը հկան կուրցունում ա, մին էլ հվաքում սեղան-սուսիրան էլ նհետը, սիրեկանին էլ տանում ա պուժկին քըմակեն պահում:

Մարթը լշին պեռնը յոր ա օնում, տինում քաշե ութաղումը, ինքի պիցրանուն տոն մտնում: Պայց կնեղյը շատ շղվալան թիշին թողալ ա ըստոլին: Մարթը նստում ա, թա հաց օտեն, տեսնում ա, վեր թիշի կա, կնդանը հրցնում ա.—Էս հինչ պեն ա, ա՛ կնեղյ:

Ա՛ մարթ, հաց ըմ թխալ, մեննս ընդավ, վեր շատ շղնավանից թիշի լըս կերալ, ըսեցին՝ մին թիշի թիմ, մարթս կյա օտեն, մեղք ա:

Էծ ծախողը կարում լի տիմանն էս սուսեն, էծի ակունչը մին պենդ կծում ա, էս խեղճ էծը մին զգյարավ մկկում ա: Մարթն ասում ա.—Ա՛ կնեղյ, էս հինչ հրաշք ա, մին ծապոին պեր տեսնանք էս հինչ օյին սու կնեղյը կլիս յա ըղնում մին պիծի, պայց նար չկա, ծապոին յոր ա օնում, մարթն էլ մին փաղ, մտնում ըն էն մին օթաղը, տեսնում ընդեղ մին մարթ, մին էծ: Մարթը փաղը պիցրցնում ա, վեր թխե, էս էծ ծախողը ասում ա.—Ըսպասեն, ախպեր, ես ըստուծու դոնաղն ըմ, կնդանդ խնդրեցեն, վեր էս քշեր ինձ պահե, օզից վուշ, ես էլ քշերվա կեսին թորը պիտի քյինիմ, թաքում նի մտեն էս տոնը, վեր թաքում մեամ մինչեւ ուութանամ: տեսա, վեր կնեղյա սիրական ա պահում, կրացե վուշ տիմանամ: թա հվատում լըս, լափ առե թուշին տանիմ մաննըս լրան տինիմ:

Մարթը թա՞ լէ, հվատում լըմ:

Էծ ծախողը էս մարթուն տանում ապուժկին քմակեն պահած  
մարթուն նշանց տամ: Սիբէ ըն տամ հանում, հրցնում.

—Տու հու վը՞ս:

Էս մարթը ծպտում չի հանում: Էծ ծախողը լոխ նազլ ա-  
նում: Էծ ծախողն ու էտ կնգա մարթը թակում ըն համ սիրեկանին  
ըն ըսպանում, համ էլ՝ կնգանը: Վեր էրկուսավ ըն մնում, էս մար-  
թը էծ ծխողեն հրցնում ա.

—Հախկըդ հի՞նչ պիտի տամ, ախպեր:

Ասում ա.—Ինձ վել մին պեն հարկավեր չի: Էս էծը մին քյա-  
սիր կնգան ա, ասալ ա՝ տար ծախեն, ինձ հետե մին հալավ պեր,  
մին խըլեղ, տասսը մանեթ փուլ, էծն էլ ետ պեր:

Էս էծ ծախողը էս մարթու կնգա հալավն էլ, խըլեղն էլ, մին  
էլ տասսը մանեթ փուլ այոր օնում, էծնն նհետ տանում տամ էս  
կնգանը, ասում.

—Տու ինձ շատ օքութ ըս տվալ. հինչ վեր կերալ ըմ՝ ինձ,  
հինչ վեր պերալ ըմ, քեզ հալալ:

Հստուծանա իրեք խնձոր ըղնե, մինը՝ քաթ ըսողեն, մինը՝  
քաթը կլիրողեն, մինն էլ էս քաթը կրթողեն, շղարճ, շղարճ անինքյ,  
օտինքյ:

